ԱԳՐՈ Լրատու

ՀՈԿՏԵՄԲԵՐ 5 - 15 2015 Թ. ԹԻՎ 26 (2081)

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՄ

ՄԹԵՐՈՒՄ

Հետևողական աշխատանք

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն այցելել է «Երևանի Արարատ կոնյակի-գինու-օղու կոմբինատ» ընկերության Մասիսի մթերման կայան, որտեղ հանդիպում է ունեցել ընկերության սեփականատեր Գագիկ Ծառուկյանի և խաղողագործների հետ:

Հանդիպման ընթացքում Գագիկ Ծառուկյանը նշել է, որ խաղողագործների հետ հանդիպման ժամանակ տրված խոստումը կիրականացվի: «Երևանի Արարատ կոնյակի-գինու-օղու կոմբինատ» ընկերությունն իրականացնում է խաղողի մթերման աշխատանքներ Արմավիրի, Արարատի և Տավուշի մասնաճյուղերում: Որպեսզի գործարանների մոտ մեծ կուտակումներ չառաջանան, Գագիկ Ծառուկյանն առաջարկել է խաղողագործներին 1-2 օր խաղողի բերքահավաք չիրականացնել, որպեսզի հնարավոր լինի մթերել արդեն իսկ քաղված խաղողի բերքը:

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը նշել է, որ Արարատի և Արմավիրի մարզերում կայացած հանդիպումների ժամանակ նույնպես հորդորել է, 1-2 օր խաղողի բերքահավաք չիրականացնել, որպեսզի բերքը չորակազրկվի, և ընկերությունները կարողանան մթերել այն: Գագիկ Ծառուկյանը միաժամանակ տեղեկացրել է, որ մթերման աշխատանքներն այսուհետ ևս կշարունակվեն:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ձեռք են բերվել խաղողի լրացուցիչ քանակի մթերումների պայմանավորվածություններ

ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Գառնիկ Պետրոսյանը «Մեդիա կենտրոնում» մասնակցել է «Խաղողի մթերումը դարձել է խնդրահարույց. պատճառներ և հնարավոր լուծումներ» թեմայով քննարկմանը:

Քննարկման բանախոսներն էին՝ Հայաստանի գինեգործների միության նախագահ Ավագ Հարությունյանը, ԱԺ պատգամավոր, Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահ Միքայել Մելքումյանը և Հայաստանի «Խաղողագործների միություն» ՀԿ նախագահ Արտակ Սարգսյանը: Իր խոսքում Գառնիկ Պետորսյանը, մասնավորապես, նշել է. որ հոկտեմբերի 8-ի դրությամբ, արդեն իսկ մթերվել է շուրջ 185 հազար տոննա խաղող՝ նախորդ ամբողջ տարվա 184 հազար տոննայի դիմաց:

Ընդգծելով, որ ավանդաբար խաղողի մթերումները շարունակվում են մինչև հոկտեմբերի 25-ը՝ Գառնիկ Պետրոսյանը հորդորել է խաղողագործներին ավելորդ շտապողականություն չցուցաբերել: Նա տեղեկացրել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության ներկայացուցիչները, երկու փոխնախարարի հետ միասին, մարզպետարանների մասնագետների և համայնքապետերի հետ տեղերում կոնկրետ միջոցներ են ձեռնարկում՝ մթերման գործընթացը կանոնակարգված կազմակերպելու ուղղությամբ՝ կոչ անելով խաղողագործներին համագործակցել նրանց հետ: Գ. Պետրոսյանի տեղեկացմամբ՝ նախարար Սերգո Կարապետյանը հանդիպումներ է ունեցել Արարատի և Արմավիրի մարզում գործող վերամշակող ընկերությունների ղեկավարների հետ, որոնց արդյունքում ձեռք են բերվել բերքի լրացուցիչ քանակների մթերումներ իրականացնելու պայմանավորվածություններ: «Այժմ մեր բոլորի թիվ մեկ գերխնդիրը խաղողի բերքահավաքի և մթերումների կազմակերպումն է: Այս պահին լարվածությունը որոշակիորեն մեղմվել է: Գյուղացին շատ մեծ դժվարությամբ է բերք արտադրում, և մենք պետք է բոլոր հնարավոր միջոցներով աջակից լինենք» - նշել է Գառնիկ Պետրոսյանը:

Ըստ նրա՝ դեռևս տարեսկզբին ակնհայտ էր, որ հանրապետությունում առկա է պատրաստի արտադրանքի իրացման ծավալների նվազում, այս տարվա հունվար-օգոստոս ամիսների տվյալներով, գինու իրացումը նվազել է 42, կոնյակինը՝ 50 տոկոսով: Մայիս ամսից նախարարության

↳2

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Գործադիրը հավանություն է տվել փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018 թթ. ռազմավարությանը: Հանդիսանալով Հայաստանի տնտեսության զարգացման գերակա ուղղություններից մեկը՝ կառավարությունը շարունակական քայլեր է իրականացնում ՓՄՁ ոլորտի զարգացման, մասնավորապես՝ ՓՄՁ պետական աջակցության համակարգի զարգացման ուղղությամբ: Եթե նախորդ տարիներին ոլորտի զարգացման քաղաքականությունն ավելի շատ կենտրոնացած էր ՓՄՁ սուբյեկտների քանակական աճի և ռեսուրսների հասանելիության վրա, ապա առաջիկա տարիներին շեշտը դրվելու է գիտելիքի, որակի, ՓՄՁ սուբյեկտների և ընդհանրապես ոլորտի մրցունակության բարձրացման վրա: Առաջիկա երեք տարիներին ՓՄՁ զարգացման ռազմավարության գլխավոր նպատակը ներքին և միջազգային շուկաներում մրցունակ ՓՄՁ սուբյեկտների գործունեության ապահովումն է, ինչպես նաև Հայաստանի ՓՄՁ ոլորտի խթանման համար հիմնական կարևոր սկզբունքների ներկայացումը, փոքր և միջին բիզնեսի գործունեության համար մրցունակ միջավայր ապահովելը:

***

Կառավարությունը հաստատել է նաև «Սահմանամերձ տարածաշրջանների զարգացման 2016 թ. ծրագիրը»: Հովիկ Աբրահամյանը նշել է, որ սահմանամերձ բոլոր համայնքների բնակիչների սոցիալական պայմանների բարելավման նպատակով, գազի, էլեկտրաէներգիայի, ոռոգման ջրի մասնակի ու հողի հարկի և անշարժ գույքի գույքահարկի ամբողջական փոխհատուցման նպատակով, 2016 թ. պետբյուջով կհատկացվի 928 մլն դրամ:

***

Շիրակի մարզում անասնաբուժական սպասարկման կենտրոնի շենքի կառուցման նպատակով, կառավարության նիստում ընդունվել է Փանիկի համայնքին պատկանող հողատարածքը՝ որպես նվիրաբերություն ընդունելու մասին որոշում: Անասնաբուժական սպասարկման կենտրոնի կառուցումը նախատեսված է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակում: Ծրագրի նպատակն անասնապահության զարգացման խթանումն է հանրապետության այն համայնքներում, որտեղ բնակչության եկամուտների հիմնական աղբյուրն անասնապահությունն է: Գործադիրը «Էրեբունի» պետական արգելոցի պահպանության բնականոն գործընթացն ապահովելու համար հաստատել է արգելոցի սահմանների նկարագիրն ու տարածքի չափը: Անհրաժեշտություն է առաջացել արգելոցի տարածքներն ընդլայնել ՀՀ Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնքի վարչական տարածքում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող 24,87 հա անտառային ֆոնդի և 6.6434 հա գյուղատնտեսական նշանակության հողերի հաշվին՝ փոխելով դրանք հատուկ պահպանվող հողերի կատեգորիայի:

***

Օպերատիվ տվյալներով, Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի հոկտեմբերի 13-ի դրությամբ, արտադրվել է շուրջ 276 000 տոննա խաղող՝ նախորդ ամբողջ տարվա 261 000 տոննայի դիմաց:

Հոկտեմբերի 13-ի դրությամբ մթերվել է 196 000 տոննա խաղող՝ նախորդ ամբողջ տարվա 184 000 տոննայի դիմաց: Նույն ժամանակահատվածում Հայաստանից արտահանվել է 6400 տոննա խաղող՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 4700 տոննայի դիմաց: Խաղողի բերքահավաքի, ինչպես նաև մթերման և արտահանման աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են:

Հայկական խաղողը հիմնականում արտահանվել է Ռուսաստանի Դաշնություն, Վրաստան, Ղազախստան և Բելառուս:

Սեփական տնտեսությունում աշխատելն ավելի եկամտաբեր է — էջ 3

Մնալ եւ աշխատել հայրենի գյուղում — էջ 5

Մասնագետի խորհուրդը — էջ 7

ՔԵՆԱՐԿՈՒՄ

Ձեռք են բերվել խաղողի լրացուցիչ քանակի մթերումների պայմանավորվածություններ

1

ուսումնասիրությունների արդյունքում, պարզ էր դարձել, որ ընթացիկ տարում ակնկալվում է խաղողի առատ բերք, որն արդեն, շուրջ 25-30 տոկոսով գերազանցելու է նախորդ տարվա ցուցանիշը:

Մի կողմից վերամշակման ճյուղում առկա խնդիրները, մյուս

կողմից բերքի առատ լինելը, ինչպես նաև այն հանգամանքը, որ խաղողի ցածր շաքարայնության պատճառով որոշ ընկերություններ այս տարի ավելի ուշ սկսեցին մթերումների գործընթացը՝ առիթ դարձան խաղողի մթերումների գործում որոշակի լարվածության ու խուճապի: Բերքահավաքն իրականացվում էր հախուռն կերպով, մարդիկ փորձում էին օր առաջ ազատվել բերքից՝ մտավախություն ունենալով, որ չեն կարողանա այն իրացնել, ուստի վերամշակող ձեռնարկությունների մոտ սկսեցին հերթեր գոյանալ, մեկ ընկերությունից մյուս ընկերությունն էին տեղափոխվում, ինչն էլ ստեղծում էր խառնաշփոթ և խուճապային տրամադրություն:

Անդրադառնալով գների հետ կապված հարցին՝ փոխնախարարը նշել է, որ թեև ազատ շուկայական տնտեսության պայմաններում նախարարությունը գին թելադրող չի կարող լինել, սակայն քննարկումների ընթացքում առաջարկություն էր եղել մթերումներն իրականացնել 150 դրամով՝ նախորդ տարվա միջին գնով: Հիմնականում այդ գինն է եղել. որոշ ընկերություններ մթերումներ իրականացրել են 145, 140 դրամով, այնուհետև, երբ ավելի ցածր որակի խաղող են առաջարկել, ավելի ցածր գնով մթերումներ են իրականացվել:

Գյուղատնտեսության փոխնախարարը վերահաստատել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության պատրաստակամությունը, որ արվելու է ամեն ինչ՝ խաղողի ամբողջ բերքը մթերելու և վերամշակելու համար:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ի գիտություն ներմուծողների

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը հիշեցնում է, որ 2016 թվականին ՀՀ տարածք երրորդ երկրներից հատիկային բերքի հավաքման կոմբայններ և կոմբայնների մոդուլներ (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8433510001, 8433510009, 8433900000) ներմուծելու համար անհրաժեշտ է մինչև ս.թ. նոյեմբերի 30-ը դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարություն՝ ներկրողների ցանկում ընդգրկվելու և մեկանգամյա ներմուծման լիցենզիա ստանալու համար:

Հայաստանի Հանրապետություն երրորդ երկրներից ներմուծումն իրականացվում է յուրաքանչյուր տարվա համար, Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի կոլեգիայի կողմից հաստատված ներմուծման թույլատրելի ծավալներին համապատասխան: 2016 թվականի համար թույլատրելի ծավալ է սահմանված 11 միավորը: Հայաստանի Հանրապետության տարածք հատիկային բերքի հավաքման կոմբայնների և կոմբայնների մոդուլների ներմուծումը կանոնակարգվում է ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1488-Ն որոշմամբ:

Մանրամասն տեղեկությունների համար կարող եք դիմել ՀՀ ԳՆ աշխատակազմի «Լիցենզավորման կենտրոն» գործակալություն՝ հետևյալ հեռախոսահամարով՝ 011 23-55-02:

ՅՈՒՅՆԱՇԱՆԴԵՍ

Պանարմենիան Էքսպո-2015

Վարչապետ Հովիկ Աբրահամյանը ներկա է գտնվել «Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի «Երևան Էքսպո» կենտրոնում «Պանարմենիան Էքսպո - 2015» վեցերորդ միջազգային ցուցահանդեսի բացմանը:

Հոկտեմբերի 8-11-ն անցկացվող ցուցահանդեսը կազմակերպվել է ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի և «Պրոմ էքսպո» ընկերության համատեղ նախաձեռնությամբ և նվիրված է Երեբունի-Երևանի 2797-ամյակին: Ցուցահանդեսին մասնակցում է 100-ից ավելի կազմակերպություն՝ ինչպես Հայաստանից, այնպես էլ՝ արտերկրից:

Վարչապետը շրջել է ցուցահանդեսի տաղավարներով, ծանոթացել հայրենական և արտերկրի արտադրողների և ձեռնարկությունների ներկայացրած արտադրատեսականուն, ցուցադրված տեխնոլոգիաներին, նորարարական համակարգերին: Կառավարության ղեկավարը զրուցել է ցուցահանդեսին մասնակցող ընկերությունների ներկայացուցիչների հետ՝ նրանց ձեռքբերումների, առկա խնդիրների և զարգացման ծրագրերի շուրջ:

«Պանարմենիան Էքսպո 2015» ցուցահանդեսի նպատակն է՝ բարձրացնել հայրենական արտադրանքի ճանաչելիությունը և խթանել արտահանումը, ստեղծել գործարար հարթակ Հայաստան-Սփյուռք տնտեսական, մշակութային, գիտատեխնիկական կապերի ամրապնդման ու զարգացման համար, նպաստել մեր երկրի տնտեսական ներուժի բացահայտմանը, ինչպես նաև Հայաստանի և արտերկրի միջև համատեղ գործարար ու ներդրումային ծրագրերի իրականացմանը: Ցուցահանդեսի թեմատիկ բաժիններն են՝ առողջապահություն, արդյունաբերություն, բեռնափոխադրումներ, գյուղատնտեսություն և սննդարդյունաբերություն, ծառայություններ, հրատարակչություն, շինարարություն և այլն: Միջազգային բազմաբնույթ այս ցուցահանդեսը լավ հնարավորություն է հայրենական արտադրանքը միջազգային շուկայում ներկայացնելու և մեր տնտեսության մեջ օտարերկրյա ներդրումներ ներգրավելու համար:

www.gov.am

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Ոսկեվազցիները սպասում են ոռոգման ջրամատակարարման բարելավմանը

ՀՀ Արագածոտնի մարզի Ոսկեվազ գյուղի ամենամեծ հիմնախնդիրն, ըստ գյուղապետ Հայկ Հովհաննիսյանի, ոռոգման անբավարար ջրամատակարարումն է: Գյուղացին հիմնականում զբաղվում է ելակի արտադրությամբ (գյուղում ելակի ցանքատրածքները 120 հա են): Գյուղապետի կարծիքով ոռոգման խնդրի կարգավորման դեպքում, ելակի ցանքատարածքները շեշտակի կավելանան, քանի որ բնակիչներն արդեն մասնագիտացել են այդ մշակաբույսի աճեցման գործում:

Ոսկեվազի գյուղատնտեսական նշանակության 940 հա հողատարածքներից 650 հեկտարն է ջրովի: Գյուղի ամբողջ հողատարածքները, տարիներ առաջ, ոռոգվում էին Արզնի-Շամիրամ ջրանցքից, ինչպես նաև Շահվերդ և Ամբերդ գետերից: «Ժամանակի ընթացքում Շահվերդ գետը, որից սնվում էր մայր առուն, ցամաքելով՝ վերածվել է փոքր առվակի: Մեր կատարած չափումներից պարզվել է, որ ջրի կորուստը կազմում է 78%: Ցամաքել է նաև Ամբերդ գետը: Խնդրի կարգավորման համար, դիմել ենք համապատասխան կառույցներին և հուսով եմ, որ գալիք տարում, մինչև ոռոգման սեզոնի սկսվելը, կկատարվեն մասնակի վերանորոգման աշխատանքներ, և ջրի կորուստը կհասցվի նվազագույնի»,- ասում է գյուղապետը: Նրա տեղեկացմամբ, ոռոգման լիարժեք բարելավման համար Արզնի-Շամիրամ ջրանցքից ջուրը դուրս բերելու համար պետք է կառուցվի 2 կմ երկարությամբ ջրատար:

«Ջրի նկատմամբ մեծ պահանջարկ ունեցող ելակի ցանքատարածքներն ընթացիկ տարում տուժել են նաև տևական երաշտից: Ի դեպ, ամռան ամիսներին, բերքահավաքի ընթացքում, սեզոնային աշխատողների թիվը հասնում է 300-400-ի: Աշխատանքներում ընդգրկվել են ոչ միայն Ոսկեվազի, այլև հարակից գյուղերի բնակիչները: Մեր նախնական հաշվարկներով, լիարժեք ոռոգման ապահովման դեպքում, ելակի ցանքատարածքները կավելանան 70-80 հեկտարով», - եզրահանգում է գյուղապետը:

Տարիների ընթացքում գյուղացին կարողացել է ճիշտ կատարել նաև ելակի սորտերի ընտրությունը: Գյուղում հիմնականում աճեցնում են քաղցրահամ, խոշորապտուղ, տեղափոխման համար դիմացկուն և բարձր բերքատու սորտեր:

Ոսկեվազն աչքի էր ընկնում նաև խաղողի այգետարածքներով: Առկա է 220 հա խաղողի այգի: Հուսով ենք, որ ոռոգման վերականգնման դեպքում, կրկին կվերադառնա Ոսկեվազի խաղողագործության երբեմնի բարի ավանդույթը:

Նելլի Սահակյան

ՈՒՂԵՐՁ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՊԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ՝ ՄԵԿԸՆԴՄԻՇՏ ԵՎ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ

Հոկտեմբերի 16-ին՝ Պարենի համաշխարհային օրը, աշխարհը շատ բան ունի տոնելու: Որպես համաշխարհային հանրություն՝ վերջին տասնամյակներում զգալի առաջընթաց ենք գրանցել աշխարհում՝ քաղցի և աղքատության դեմ պայքարի գործում: ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից մշտադիտարկման ենթարկված երկրների մեծամասնությունը՝ 129-ից 72-ը, կարողացել է հասնել Հազարամյակի զարգացման նպատակի թիրախին, այն է՝ մինչև 2015 թ.-ը երկու անգամ կրճատել թերսնուցման մակարդակը այդ երկրների բնակչության շրջանում: Միևնույն ժամանակ, զարգացող երկրներում նույնպես զգալիորեն կրճատվել է ծայրահեղ աղքատության շեմին գտնվող բնակչության տեսակարար կշիռը՝ 1990 թ.-ին գրանցված 43 տոկոսից նվազելով՝ այս տարվա ընթացքում հասել է 17 տոկոսի:

Առաջընթացը, սակայն, ընթացել է անհամաչափ: Համաշխարհային մասշտաբով մոտ 800 միլիոն մարդ դեռևս շարունակում է տառապել քրոնիկ քաղցից: Գրեթե մեկ միլիարդ մարդ էլ գտնվում է ծայրահեղ աղքատության մեջ:

Այսպիսով, չնայած գործադրված մեծ ջանքերին, քաղցն ու աղքատությունը դեռևս իսպառ չեն վերացել, նույնիսկ, տնտեսական առումով հաջող տարիներին: Այո՛, տնտեսական աճը, հատկապես գյուղատնտեսության ոլորտում, չափազանց կարևոր է եղել քաղցի և աղքատության չափերը կրճատելու գործում: Սակայն այդ ամենը բավական չէ, քանի որ շատ հաճախ բոլոր խնդիրները չեն ներառվում ընդհանուր պայքարի ծրագրում:

Որպես ահազանգ այդ ամենին՝ զարգացող աշխարհի շատ երկրներ կիրառել են սոցիալական պաշտպանության միջոցառումներ՝ բնակչությանն առաջարկելով կանոնավոր ֆինանսական կամ բնամթերքով տրամադրվող աջակցություն, հնարավորություն օգտվելու, այսպես կոչված, ինքնաօժանդակման ծրագրերից, որոնք միտված են նրանց կարևորությունն ընդգծելուն, ինչպես նաև մշակել են աղքատությունը և սովը հաղթահարելու առաջնային ծրագրեր:

Միմյանց հաջորդող ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սոցիալական պաշտպանության ծրագրերը բարեհաջող կերպով կրճատում են քաղցի և աղքատության մակարդակը: Միայն 2013 թ.-ին այդպիսի միջոցառումները մոտ 150 միլիոն մարդու դուրս են բերել ծայրահեղ աղքատությունից:

Զարմանալի կարող է թվալ, սակայն այս ծրագրերն ավելին են անում, քան՝ պարզապես եկամտի պակասը լրացնելն է: Դրանք պարզապես տրամադրվող օժանդակություն չեն առաջին անհրաժեշտությունները հոգալու համար, այլ՝ օգնության ձեռք սեփական ուժերին ապավինելու ուղին ընտրելու համար:

Աշխարհում ապրող աղքատ և քաղցից տառապող մարդկանց մեծամասնությունը գյուղական ընտանիքներից են, ովքեր իրենց օրվա սննունդն ու ապրուստն ապահովում են գյուղատնտեսության միջոցով: Այս ընտանիքների ֆերմերները և գյուղաբնակ բանվորները, բնականաբար, կենտրոնացած են տեղում և այդ պահին գոյատևելու խնդրի վրա: Եկամուտ ապահովելու հարցում նրանք կիրառում են ցածր ռիսկերի և ցածր եկամտաբերության մոտեցումը, լիարժեք ներդրում չեն կատարում իրենց երեխաների կրթության և առողջության պահպանման հարցերում, նաև գոյատևման համար, շատ հաճախ ստիպված են լինում դիմել բացասական հետևանք ունեցող այնպիսի ռազմավարական միջոցների, ինչպիսիք են՝ չնչին ակտիվների վաճառքը, մանկական աշխատուժի կիրառումը կամ ծախսերը նվազեցնելու նպատակով, սննդի օգտագործման կրճատումը: Նրանք հայտնվում են գոյատևման ռեժիմի թակարդում: Աղքատությունը և սովը դառնում են միջսերնդային և, կարծես թե, անխուսափելի երևույթներ:

Սակայն, դա չպետք է այդպես լինի:

Այսօր մենք գիտենք, որ նույնիսկ համեմատաբար փոքր փոխանցումներն աղքատ ընտանիքներին, եթե դրանք կանոնավոր են և կանխատեսելի, կարող են հանդիսանալ որպես ապահովագրություն այն ռիսկերից, որոնք նրանց հետ են պահում ավելի բարձր եկամտաբերություն ունեցող գործողություններից կամ ստիպում են նրանց որդեգրել բացասական հետևանք ունեցող ռազմավարություններ: Սոցիալական ապահովագրությունն աղքատ և խոցելի ընտանիքներին թույլ է տալիս ունենալ ավելի հեռանկարային հորիզոն՝ առաջարկելով նրանց հույս և ապագան ծրագրավորելու հնարավորություն: Քանի որ աշխարհի աղքատ և սովյալ բնակչության մեծ մասը դեռևս ապրում է գյուղական վայրերում և կախված է գյուղատնտեսությունից՝ սոցիալական պաշտպանության ծրագրերի համակցումը գյուղատնտեսության զարգացման ծրագրերի հետ, բավականին նպատակահարմար է: Ահա թե ինչու է ՊԳԿ-ն ընտրել սոցիալական պաշտպանությունը և գյուղատնտեսությունը՝ որպես այս տարվա Պարենի համաշխարհային օրվա թեմա:

Սակայն իմանալ անելիքները և գործելը երկու տարբեր բաներ են: Համայնքային աղքատության բազմամյա կապանքները մեկընդմիշտ կոտրելու համար, աշխարհը պետք է գործի ավելի հրատապ և վճռականորեն:

Առողջապահության և կրթության ոլորտում քաղաքական հանձնառությունը, համարժեք ֆինանսավորումը, համագործակցությունը և համապատասխան լրացուցիչ գործողություններն այս տեսլականն իրականություն դարձնելու հիմնական տարրեր կարող են հանդիսանալ: Գյուղական համայնքների զարգացման, աղքատության կրճատման, սննդամթերքի և սնուցման անվտանգության վերաբերյալ քաղաքականության և ծրագրավորման շրջանակները պետք է խթանեն գյուղատնտեսության և սոցիալական պաշտպանության համատեղ դերը աղքատության և սովի դեմ պայքարելու հարցում, միաժամանակ, կատարելով լայնամասշտաբ միջամտություններ, մասնավորապես՝ կրթության և առողջապահության համակարգում: Համախմբվելով և օգտագործելով մեր տնօրինության տակ գտնվող գործիքներն ու գիտելիքները՝ առանց բանկ թալանելու կարող ենք մինչև 2030թ.-ն ամբողջովին վերացնել քրոնիկ բնույթի քաղցը: Իսկապես, այժմ դա կարող է հանդիսանալ տոնակատրության պատճառ:

Ժոզե Գրացիանո դա Սիլվա
ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության գործադիր տնօրեն

Ուշադրություն

Եղե՛ք տեղեկացված բրուցելոզ հիվանդության վերաբերյալ և պաշտպանվե՛ք դրանից: Բրուցելոզը մարդկանց և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդություն է, որը սովորաբար ուղեկցվում է փոփոխական տենդով, թուլությամբ, մկանացավերով, հոդացավերով, ախորժակի բացակայությամբ և քրտնարտադրությամբ: Մարդկանց մոտ հիվանդության գաղտնի շրջանը տևում է երկու կամ երեք շաբաթ:

Բրուցելոզով վարակում

Բրուցելոզով կարող են հիվանդանալ ինչպես բոլոր տարիքի և սեռի մարդիկ, այնպես էլ գյուղատնտեսական, տնային (ընտանի) և վայրի կենդանիները: Վարակի հիմնական աղբյուրը հիվանդ կենդանիներն են և նրանցից ստացված մթերքը: Մարդը վարակվում է հիվանդ կենդանիներին խնամելիս, ինչպես նաև ջերմային մշակման չենթարկված կաթ, կաթնամթերք (հատկապես՝ պանիր) և լավ չեփված մսեղիք օգտագործելու դեպքում:



Հիվանդությամբ չվարակվելու համար հետևեք անձնական հիգիենային և սնվեք առողջ:

Կենդանիների հետ շփվելուց հետո լվացե՛ք ձեռքերը: Կենդանիների հետ աշխատելիս, մշտապես կրե՛ք համապատասխան ձեռնոցներ, հատկապես, եթե առնչվելու եք վիժված պտղի, պտղաթաղանթների կամ ծննդաբերող կենդանու հետ: Լավ եփե՛ք միսը, քանի որ բրուցելոզի հարուցիչները ոչնչանում են միայն լավ եփելուց հետո: Ընտրե՛ք միայն գործարանային փաթեթավորմամբ կաթ և կաթնամթերք: Եթե ունեք կենդանիներ, սեփական արտադրության կաթն օգտագործե՛ք միայն եռացնելուց հետո: Մի՛ գնեք կաթ, կաթնամթերք և մսամթերք պատահական վայրերից: Հիվանդության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվության համար դիմե՛ք Ձեր բժշկին կամ համայնքային անասնաբույժին:

Բրուցելոզ հիվանդության վերաբերյալ բնակչության իրազեկման քարոզարշավն իրականացվում է «Տեխնիկական և ինստիտուցիոնալ աջակցություն՝ Հայաստանի անասնաբուժական ծառայությանը» ծրագրի աջակցությամբ: Ծրագրի նպատակն է՝ ՀՀ Սյունիքի մարզում անասնաբուժական ծառայությունների ոլորտի հզորացումը, ինչը կնպաստի Հայաստանում պարենային անվտանգության համակարգի բարելավմանը և գյուղատնտեսական կայուն զարգացմանը: Ծրագիրն իրականացվում է «Ռազմավարական Զարգացման Գործակալություն» (ՌԶԳ) հասարակական կազմակերպության և ՄԱԿ-ի Պարենի և Գյուղատնտեսության Կազմակերպության (ՊԳԿ), ՀՀ առողջապահության և գյուղատնտեսության նախարարությունների համատեղ ջանքերով՝ Շվեյցարիայի Զարգացման և Համագործակցության Գործակալության ֆինանսավորմամբ:

Կենդանիների և սննդի հետ կապված խնդիրների դեպքում զանգահարել Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ԹԵԺ ԳԻԾ՝ 20-60-40: Մարդկանց շրջանում հիվանդության հետ կապված հարցերի դեպքում՝ զանգահարել ՀՀ առողջապահության նախարարության ԹԵԺ ԳԻԾ՝ 52-88-72:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՖԵՐՄԵՐՈՒԹՅՈՒՆ

ՍԵՓԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՇԽԱՏԵԼՆ ԱՎԵԼԻ ԵԿԱՄՏԱԲԵՐ Է

Շիրակի մարզի «Գաբոյանի Մուշեղ» ՍՊԸ-ն մեկ տասնամյակից ավելի է, ինչ զբաղվում է կարտոֆիլի և հացահատիկային մշակաբույսերի սերմնարտադրությամբ: Բերքատվության բարձր ցուցանիշների ապահովման շնորհիվ, ընկերությունը բազմիցս արժանացել է մեդալների, պատվոգրերի ու շնորհակալագրերի:

Հաջողությունների գաղտնիքն, ըստ ընկերության տնօրեն Հովհաննես Գաբոյանի, պայմանավորված է ընտանիքի անդամների համերաշխ, միասնական և նվիրյալ աշխատանքով: Տարբեր մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն ստանալուց հետո երեք որդիներն անմիջապես ձեռնամուխ եղան սեփականաշնորված և վարձակալած հողատարածքների մշակությանը: Աշխատանքներին իր անմիջական մասնակցությունն է ցուցաբերում նաև տիկինը:

Այս տարի կարտոֆիլի ցանք են կատարել 25 հա հողատարածքի վրա: Ցանված վաղահաս Իմպալա և Ագաթա սորտերը հիմնականում գնում են Արարատյան դաշտավայրի ֆերմերները: Միջահաս և ուշահաս սերմերով, որոնք ներկրվում են Գերմանիայից և Հոլանդիայից, ապահովվում է Շիրակի մարզի ֆերմերների պահանջարկը: «Կարտոֆիլի սերմացուն իրացման խնդիր չունի, կարողանում ենք բավարարել միայն մշտական սպառողների նախապես պատվիրված պահանջարկը»,- ասում է Հովհաննես Գաբոյանը: Նրա կարծիքով, կարտոֆիլի գնագոյացման հարցում առկա է պետական միջամտության անհրաժեշտությունը, քանի որ գնային մշտական տատանումներն անակնկալներ են մատուցում թե՛ արտադրող ֆերմերին, և թե՛ սպառողին: Ի դեպ, արտադրված բերքի 50 %-ը զտումից հետո, վաճառվում որպես սերմացու, մնացածն իրացվում է որպես պարենային կարտոֆիլ: Ընկերությունն ունի հինգ հիմնական և քսան սեզոնային աշխատող:

Ֆերմերային տնտեսությունը համալրված է Գերմանիայից ներկրված ժամանակակից տեխնիկայով: Նորագույն տեխնիկայի կիրառման արդյունքում ձեռքի

աշխատանքը հասցվել է նվազագույնի: Ապահովված են նաև մշակության համար անհրաժեշտ գյուղատնտեսական գործիքներով:

Ի դեպ, «Գաբոյանի Մուշեղ» ՍՊԸ-ն Հայաստանում առաջիններից էր, որ ներդրեց հացահատիկային մշակաբույսերի ցանքի անվար տեխնոլոգիան: Մեծ էր ռիսկայնությունը, քանի որ երբևէ չէին փորձարկել այդ եղանակը: «Անվար եղանակով ցանել սկսել ենք 2008 թվականից և, առաջին տարում, նույնիսկ, ստացանք աննախադեպ բերք: Երաշտի տարի էր, և անգամ բնակլիմայական անբարենպաստ պայմանների դեպքում, հեկտարից հավաքեցինք 50 ցենտներ բերք»,- հիշում է ֆերմերը: «Այդ տեխնոլոգիայով, մինչև օրս, ցանքեր ենք կատարում: Նախորդ տարվա 25 հեկտարի փոխարեն, այս տարի անվար եղանակով ցանքի տակ ենք դնելու 30 հա հողատարածք»:

Հովհաննես Գաբոյանը շուրջ 12 տարի «Արմենիան Թեքնոլոջի Գրուփ» (ԱԹԳ) հիմնադրամի «Սերմնարտադրողների ասոցիացիայի» անդամ է: «Ասոցիացիան մշտապես աջակցում է մասնագիտական լուծումներ պահանջող բարդ և դժվարին հարցերի կարգավորման գործընթացում: Նրանք իրենց փորձն ու մասնագիտական հմտությունները փոխանցել են մեզ, մենք էլ՝ Շիրակի մարզի ֆերմերներին: Արդյունքում, գյուղատնտեսության վարումը տնտեսություններում դրվել է գիտական հենքի վրա: Ֆերմերները կարողացել են հաղթահարել արդեն ձևավորված կարծրատիպը և անցնել հողի մշակության ոչ ավանդական, անվար եղանակին»,- պատմում է ֆերմերը:

Ընտանեկան ֆերմերության և աշխատասիրության լավագույն օրինակ հանդիսացող այս ընկերության փորձն ուսանելի է ոչ միայն Շիրակի, այլև հանրապետության ֆերմերային այլ տնտեսությունների համար: «Գիտնականների հաշվարկներից պարզվել է, որ Հայաստանի հողատարածքների արդյունավետ մշակման դեպքում, տեղական արտադրանքով կարող է բավարարվել շուրջ 15 մլն բնակչի սննդի պահանջարկը: Սրանք չափազանցածված թվեր չեն, ես հավատացած եմ, որ դա լիովին հնարավոր է: Ինչ վերաբերում է մեր ֆերմերային տնտեսությանը, ապա փորձը ցույց տվեց, որ մեր ընկերությունում աշխատելով, իմ ընտանիքի յուրաքանչյուր անդամ ավելի մեծ եկամուտ է ստանում: Կարծում եմ, ընտանեկան ֆերմերության խելամիտ կազմակերպումը նպաստում է ոչ միայն եկամուտների ավելացմանը, այլև՝ տնտեսության օրեցօր զարգացմանն ու բարգավաճմանը», - հավելում է ֆերմերը:

Ընկերության սեզոնային աշխատողներն, ականատես լինելով ընտանիքի ջանադիր ու նվիրյալ աշխատանքին, իրենք ևս փոխում են իրենց անհատական մոտեցումը գործի նկատմամբ՝ դառնալով նույնքան պատասխանատու, նույնքան ազնիվ ու նվիրված: Արդյունքում շահում է թե՛ աշխատանքը, թե՛ տնտեսությունը և թե հայրենիքը:

Նելլի Սահակյան

ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲԵՐՔԻ ՏՈՆ ԼՈՌԻՈՒՄ

Լոռու մարզի գյուղական համայնքների համար 2015թ. գյուղատնտեսական տարին բարեբեր էր, ձեռքբերումներն՝ ակնհայտ: Առաջընթացն առավել տեսանելի է հատկապես մշակաբույսերի ծավալների ավելացման ու բերքի որակի բարելավման առումով: Սիա թե ինչու, Գյուլագարակ համայնքի մերձակա «Հեքիաթ» հանգստի գոտում ավանդական «Բերքի տոն» հանդիսության մասնակիցները՝ համայնքների ներկայացուցիչներն ու հանդիսատեսը, եկել էին օրը տոնական դարձնելու տրամադրվածությամբ: Հանդիսության մեկնարկից առաջ յուրաքանչյուր համայնք ջանացել էր ինքնատիպ ձևավորում տալ ոչ միայն ներկայացված բերք ու բարիքին, այլև այն ամենին, ինչը թեև անմիջականորեն չէր առնչվում բերքի գաղափարին, բայց ներկայացնում էր տվյալ համայնքի կենցաղի ու սովորույթների առանձնահատկությունները:

Տոնախմբության մասնակիցներին և հյուրերին ողջունեց Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը: «Սա ոչ միայն արդեն ավանդական դարձած, գեղեցիկ տոնախմբություն է, այլև յուրատեսակ հաշվետվություն՝ գյուղատնտեսության ոլորտում մարզի ձեռքբերումների մասին: Այս տեսակետից հաճույքով եմ տեղեկացնում, որ 2015 թվականը, որոշ վերապահումներով, մարզի համար առատ բերքի, նախորդ տարիների համեմատությամբ, առաջընթացի տարի է: Ընթացիկ տարում ցանքատարածություններն ավելացել են 3000 հեկտարով: Եվ դա՝ ՀՀ կառավարության կողմից մատչելի պայմաններով վառելանյութի, սերմացուների ու պարարտանյութի տրամադրման տեսքով, նաև գյուղատնտեսության ոլորտին ցուցաբերվող համակողմանի աջակցության շնորհիվ»,- նշել է մարզի ղեկավարն ու բոլորին մաղթել բարձր, տոնական տրամադրություն: Տոնի մասնակիցներին օրհնության ու բարեմաղթանքի խոսք է ասել Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանը: Հանդիսությանը հրավիրված էր ՀՀ-ում ՌԴ գլխավոր հյուպատոս Եվգենի Կոնիշևը: Ապա, ընդունված կարգի համաձայն, ընթացիկ տարվա բերքատվության բարձր արդյունքների հասած համայնքներ և անհատներ ստացել են Լոռու մարզպետի պատվոգրերն և շնորհավորագրերը:

2015 թ. ընթացքում, կաթի մթերման, վերամշակման, արտադրանքի որակի բարձրացման և իրացման ծավալները մեծացնելու բնագավառում ձեռք բերած հաջողությունների համար, լավագույն կազմակերպություն ճանաչվեց և Լոռու մարզպետի Ոսկե հուշամեդալին արժանացավ «Դուստր Մելանյա» ՍՊԸ-ն (տնօրեն՝ Ռուբեն Հարությունյան): Տարբեր անվանակարգերում մրցանակակիրներ դարձան. Ֆիոլետովո համայնքը՝ որպես մարզի լավագույն համայնք, Սպիտակ քաղաքը՝ 2015թ. ընթացքում գյուղատնտեսության ոլորտում բարձր ցուցանիշների համար, Գյուլագարակ համայնքը՝ 2015թ. հացահատիկային մշակաբույսերի բարձր վերարտադրության ապահովման համար, Կուրթան համայնքը՝ 2015թ. գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը լիարժեք օգտագործելու համար: Մարզի լավագույն մեխանիզատորին շնորհված մրցանակը Բաբկեն Ջոթյանինն էր (Մեծ Պարնի):

Տարվա ընթացքում գյուղատնտեսության և բնապահպանության ոլորտները լավագույնս լուսաբանելու համար, Լոռու մարզպետի պատվոգրին է արժանացել նաև «Ֆորտունա» մարզային հեռուստաընկերությունը: Լոռու մարզի գյուղացիական տնտեսությունների հետ սերտ համագործակցելու և «Բերքի տոն» մարզային տոնակատարության կազմակերպմանն ու անցկացմանը պարբերաբար հովանավորելու համար պարգևատրվեց «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ» բանկի «Լոռի» մասնաճյուղը (կառավարիչ՝ Ոսկան Զաքարյան):

Լոռու ԳԱՄԿ

ԴԻՄԱՆԿԱՐ

ՄԵՂՎԻՑ ԷԼ ԱՇԽԱՏԱՍԵՐ

Բռնակոթցի Արմեն Գասպարյանը մի քանի տարի է, ինչ վերադարձել է ՌԴ-ից «Գնացել էի փող աշխատելու, բայց հետո համոզվեցի, որ էն չարչարանքը, որ օտար երկրում եմ կրում, մեր տան-դռանը դրանով ավելի շատ եկամուտ կունենամ», -ասում է Արմենը: Վերադառնալուց անմիջապես հետո սկսել է մեղվաբուծությամբ զբաղվել: Սկզբում չորս փեթակ է գնել, տարիների հետ ավելացրել է: Ասում է, որ մեղվապահությունն աշխատատար է, մանրուքներն անգամ կարող են որոշիչ լինել թե մեղուների բազմացման, և թե ստացվող բերքի համար: Չի թաքցնում, որ սկզբում գրեթե անտեղյակ էր, բայց ժամանակի ընթացքում համացանցից, գրքերից որոշակի հմտություններ է ձեռք բերել: Կարևորում է նաև Սյունիքի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի խորհրդատուների, մասնավորապես՝ Արգամ Բարսամյանի խորհուրդները, տեսական և գործնական գիտելիքները, որոնք ստացել է նրանից: «Երբ նրան հայտնեցի, որ ցանկություն ունեմ մեղվաբուծությամբ զբաղվել, առաջին խորհուրդն այն էր, որ ես պետք է մեղվից աշխատասեր լինեմ և արագաշարժ»:

Ժամանակի ընթացքում համոզվել է, նրա խոսքերի ճշմարտացիության մեջ: Ըստ նրա՝ դժվարություններն էլ քիչ չեն. դժգոհում է, որ գյուղում ոչ բոլորն են իրենց այգիներում անհրաժեշտ ագրոտեխնիկական միջոցառումներն իրականացնում, այդ պատճառով էլ հիվանդություններ են տարածվում, ինչը ևս ազդում է բերքի վրա: Արմենի խոսքով՝ մեղվաբուծությունը, որքան էլ որ ներդրումներ, հետևողականություն, աշխատասիրություն է պահանջում, նույնքան էլ գյուղատնտեսության այն ոլորտներից է, որով հնարավոր է ընտանիքի բարեկեցությունն ապահովել, եթե միայն հնարավոր լինի իրացման խնդիրը լուծել: «Նախորդ տարի չի հաջողվել մեկ տոննայից ավելի մեղրն իրացնել, կարծում եմ, ինչպես այլ գյուղմթերքների, նաև մեղվաբուծությանն էլ պիտի ուշադրություն դարձնեն, թեկուզ պետական կարիքների՝ դպրոցականների, զինվորների համար», - համոզված է երիտասարդ մեղվաբույծը: Նա նաև նշում է, որ իրացման պատճառով չի կարողանում ընդլայնել տնտեսությունը, ավելացնել մեղվափեթակները: Ա. Գասպարյանը զբաղվում է նաև անասնապահությամբ, պանիր է արտադրում, կարտոֆիլ աճեցնում. «Օրնիբուն աշխատում եմ, փորձում եմ հետ չմնալ ժրաջան մեղուներից, փաստորեն, հետևում եմ Բարսամյանի խորհրդին», - կատակում է ֆերմերը:

Ըստ «Սյունիքի ԳԱՄԿ» ՓԲԸ Սիսիանի տարածաշրջանի գյուղատնտեսության գծով խորհրդատու Ա. Բարսամյանի՝ Արմենի տնտեսությունում օրերս, համայնքի այլ մեղվաբույծերի մասնակցությամբ, կազմակերպվել էր դաշտային օր՝ «Մեղուների աշնանային խնամքը և նախապատրաստումը ձմռանը» թեմայով, միաժամանակ պատրաստվել հեռուստահաղորդում, որն առաջիկայում կհեռարձակվի հանրապետական և մարզային հեռուստաալիքներով:

Ս. Շահնազարյան
Սյունիքի ԳԱՄԿ

ԱԳՐՈ Լրատու
Հոկտեմբեր 5 - 15, 2015 թ.
թիվ 26 (2081)

ԳՈՐԾԱՐԱՐ ԿԱՆԱՅՔ

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՄԱՐԴ ԻՆՉ-ՈՐ ՆՊԱՏԱԿ ՈՒ ՁԳՏՈՒՄ ՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱ

«Աշխատասեր մարդը միշտ էլ աշխատանք կգտնի: Ոչ-ոքի պատրաստի ոչինչ չի մատուցվում: Միայն ընտանեկան աշխատասիրության արդյունքում է, որ կարելի է հաջողությունների հասնել», - ասում է ՀՀ Արագածոտնի մարզի Ոսկեվազ գյուղի բնակչուհի Արմինե Խեչումյանը:

Մասնագիտությամբ ճարտարապետ Արմինեն, բուհն ավարտելուց հետո, անցել է աշխատանքի: Այնուհետև ամուսնացել է, որից հետո տիկին Արմինեն սկզբնական շրջանում չի աշխատել, զբաղվել է երկու որդիների դաստիարակությամբ և կրթությամբ: «Երբ տղաներս անցան ինքնուրույն կյանքի և ինքնակազմակերպված էին, ամուսնուս՝ Սուրեն Սահակյանի հետ համատեղ, որդիներիս աջակցությամբ, մեր տնամերձում 500 մ^2 հողատարածքի վրա հիմնեցինք ջերմոցային տնտեսություն: Աճեցնում ենք լոլիկ, վարունգ և տաքդեղ: Ինչպես ասում են՝ որակյալ արտադրանքն անպայման սպառող կունենա: Գնորդներն ապրանքը գնում են անմիջապես տնտեսությունից: Կարելի է ասել, իրացման վրա գրեթե ժամանակ չենք ծախսում»,- պատմում է Արմինեն: Արտադրանքի անմնացորդ իրացման արդյունքում, տարեցտարի ընդլայնում են տնտեսությունը, փոխում սորտերը՝ ընտրելով ավելի բերքատու, ապրանքային տեսքով աչքի ընկնող և շուկայում մեծ պահանջարկ վայելող սորտեր:

«Ընտանիքիս յուրաքանչյուր անդամ լավ գիտի իր պարտականությունները և որևէ մեկին պետք չէ հիշեցնել այդ մասին, քանի որ բոլորն էլ պարտաճանաչ են և մեծ պատասխանատվությամբ են վերաբերում գործին»,- ասում է Արմինեն: Ավագ որդին՝ Անդրանիկը, մասնագիտությամբ հեռուստաօպերատոր է, կրտսերը՝ Լևիկը, գյուղատնտես: Անդրանիկն աշխատանքով շատ զբաղված լինելով երևանյան ստուդիաներում՝ կարողանում է նաև ժամանակ տրամադրել ջերմոցային տնտեսությանը: Լևիկն իր ամբողջ օրն անցկացնում է ջերմոցում, որտեղ անսպառ գործ կա:

«Բույսը, ինչպես և երեխան, մշտական խնամք և ուշադրություն է պահանջում: Որևէ աննշան բաց թողում անմիջապես ազդում է բույսի վրա, կարծես թե խեղճանում է: Ցանկացած գործում, եթե արդյունք ես ուզում ստանալ, պետք է նվիրվես անմնացորդ: Այլապես, ջանքերդ զուր կանցնեն»,- նշում է արդեն տարիների աշխատանքային լայն փորձ ունեցող կին գործարարը:

Ջերմոցային տնտեսության կայացման գործում իր մեծ ներդրումն ունի նաև ամուսինը՝ Սուրենը: «Ես, իմ ընտանիքով, շարունակում եմ ծնողներիս ավանդույթը: Նրանք շատ նվիրյալ ամուսիններ էին, ապրում էին հաշտ, համերաշխ, բոլոր խնդիրները լուծում էին միասին: Իմ մանկության հուշերի մեջ հորս միշտ աշխատելիս եմ մտաբերում: Ես նրանից սովորեցի նաև աշխատասիրություն: Եվ հիմա դրական այդ հատկանիշները տեսնում եմ իմ ընտանիքում»,- իր խոհերն է կիսում Սուրենը:

Ջերմոցային տնտեսության ամբողջ մակերեսն օգտագործում են մեծ արդյունավետությամբ, ոչ մի թիզ հող անմշակ չի մնում: Որակյալ սածիլներ ստանալու նպատակով, դրանք աճեցնում են տեղում, այնուհետև՝ կատարում տունկ: Տնտեսությանն առնչվող ցանկացած հարցի շուրջ խորհրդակցում են միմյանց հետ:

«Ես այն կարծիքին չեմ, որ գյուղերում աշխատատեղեր չկան: Աշխատատեղեր և աշխատանք կա՝ որքան ասես, միայն թե՝ աշխատել է պետք: Յուրաքանչյուր մարդ ինչ որ նպատակ ու ձգտում պետք է ունենա, այնուհետև՝ ձեռնամուխ լինի դրա իրագործմանը: Այդպես է կյանքն իմաստ ու բովանդակություն ստանում», - եզրահանգում է Արմինեն: Կազմակերպված աշխատանքի արդյունքում,

չեն տուժում նաև տնային գործերը: Արմինեն ամեն ինչ հասցնում է կատարել ժամանակին: Եվ դա միմյանց օգնելու, հոգսերը կիսելու և աջակցելու շնորհիվ է:

Որդիները որոշել են ամուսնանալ՝ գործարարության բնագավառում որոշակի առաջընթաց ունենալուց հետո: Տնտեսության էլ ավելի կայացման նպատակով այժմ նոր ծրագրեր են մշակվում, որոնք, համոզված ենք, անպայման կյանքի կկոչվեն:

Նելլի Սահակյան

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՄՆԱԼ ԵՎ ԱՇԽԱՏԵԼ ՀԱՅՐԵՆԻ ԳՅՈՒՂՈՒՄ

Գուրգեն Աբովյանը որոշել է մնալ Ադրբեջանի հետ սահմանային իր հայրենի Կոթի գյուղում: Այն ժամանակ, երբ բազմաթիվ մարդիկ ադրբեջանական կողմի կրակոցների պատճառով վախենում են պարզապես դուրս գալ տանից, Գուրգենն ամեն օր արթնանում է վաղ առավոտյան և սկսում կաթ հավաքել՝ պանրի սեփական փոքրիկ արտադրամասի համար: Նա իր տան երկրորդ հարկը և տանիքը վերանորոգել և վերածել է պանրի արտադրամասի:

Գուրգենը պանրի արտադրությունը սկսել է դեռևս 2010 թ., արտադրության տարրական գործիքներով՝ իր ձեռքերով: Առաջին տարիները Գուրգենի համար եղել են սովորելու և ուսումնասիրության տարիներ: Այժմ նա կարողանում է հավաքել օրական մինչև 1000 լիտր կաթ: Գուրգեն Աբովյանը ցանկանում է գրանցել և զարգացնել իր սեփական ապրանքանիշը՝ «Koti Product»-ը: Նրա նպատակը ապրանքանիշը Հայաստանում և արտերկրում ճանաչելի դարձնելն է: Չնայած նրա համագյուղացիներից շատերը լքել են Կոթին՝ ՌԴ-ում և այլ երկրներում գումար վաստակելու համար, Գուրգենը մտադիր է մնալ և աշխատել հայրենի գյուղում: «Դժվարությունները նույնն են ամեն տեղ: Ես մնալու և այստեղ աշխատելու կողմնակիցն եմ ու չեմ ցանկանում հեռանալ: Բոլոր խոչընդոտները պետք է հաղթահարվեն»,- ասում է սկսնակ գործարարը: Նա հավատում է, որ թեկուզ փոքր, բայց վստահ քայլերով կկարողանա իրականացնել իր առջև դրված նպատակները:

Նշենք նաև, USAID/PRP ծրագրի շրջանակում ձեռք են բերվել և Արարատի մարզի 7, ինչպես նաև Տավուշի մարզի 11 շահառուներին են տրամադրվել չորանոց, ջերմոց և սառնարան կառուցելու համար անհրաժեշտ նյութեր ու սարքավորումներ: Ընդհանուր առմամբ, դրամաշնորհը տրամադրվել է 18 շահառուի: Նրանցից 5-ը զբաղվում է չրերի արտադրությամբ, 4-ը՝ հիմնել սառնարան, իսկ 9-ը՝ ջերմոց:

Հավելենք, որ դրամաշնորհները տրամադրվել են նաև Փոքր

Վեդի և նրան հարակից համայնքներում, ինչպես նաև Բագրատաշեն ու հարակից համայնքներում իրականացած տեղական տնտեսական զարգացման ծրագրի (ՏՏԶ) ավարտից հետո: ՏՏԶ ծրագրի ընթացքում ՓՄՁ ՁԱԿ-ի և գործընկեր կազմակերպությունների փորձագետները վերհանել են համայնքների տնտեսական զարգացման նախաձեռնությունները, մրցակցային առավելությունները: Այնուհետև համայնքների գործարարները մասնակցել են «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրին: Դրա արդյունքների հիման վրա, հանձնաժողովը կայացրել է վարկային երաշխիքներ և դրամաշնորհներ տրամադրելու որոշումները: Որպես զարգացման ուղղություն՝ USAID/PRP ծրագիրն ընտրել է պանրի, չրերի արտադրությունը, սառնարանային տնտեսությունը և ջերմոցային տնտեսությունը:

Դեռևս 2013 թ. սեպտեմբերից Հայաստանում մեկնարկել է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) 5-ամյա ծրագիրը: Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի գլխավորությամբ, ծրագիրն իրականացնում են համայնքային զարգացման մեծ փորձ ունեցող «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոնը» (CARD), Գեղարքունիքի առևտրաարդյունաբերական պալատը և գործարար խորհրդատվություն իրականացնող «Ի-Վի Քոնսալթինգ» կազմակերպությունը:

www. smednc.am

ԽՃԱՆԿԱՐ

ՋՐԵՐԻ ԱՂԱՋԵՐԾՄԱՆ ՆՈՐ ԵՂԱՆԱԿ

Աշխարհում ավելի հաճախ են ջրի պակասի խնդիրը լուծում ծովի կամ օվկիանոսի ջրերի աղազերծման միջոցով: Այս գործընթացում առաջնայինը էներգիայի մեծ ծախսերն են. անգամ ամենաէներգախնա հակադարձ օսմոսի տեխնոլոգիան, 1մ^3 քաղցրահամ ջուր ստանալու համար, պահանջում է 3,7 կվտ/ժամ էլեկտրաէներգիա:



Եվ ահա Փենսիլվանիայի համալսարանի մի խումբ գիտնականներ՝ Բրյուս Լոգանի գլխավորությամբ, ներգրավել են այդ գործընթացում: Բակտերիաները, որոնք ոչ միայն աղազերծում են ջուրը, այլև, դրա հետ մեկտեղ, ջրածին են արտադրում, որի միջոցով էլ կոմպենսացվում են աղազերծման էներգետիկ կորուստները:

Ավելի քան 15 տարի առաջ սկսած հետազոտությունների արդյունքում մեկ թերություն կար. աղազերծման ընթացքի հետ ընկնում էր առաջացող հոսանքի լարումը, որը հետագայում վերածվեց աղաջրի լրացուցիչ ծավալների զուգահեռաբար ներմիացումով, որի շնորհիվ առաջացած լրացուցիչ էներգիան հնարավորություն տվեց ավարտին հասցնել սկսած գործընթացը:

Վ.Հ.

ՏԵՍԱԿԵՏ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐ

Շարունակելով մեր նախորդ համարներում լուսաբանված «Հողապաշտպան ռեսուրսախնա երկրագործության» (ՀՌԵ) թեման՝ անդրադառնանք միջանկյալ մշակաբույսերին, որոնք նախկինում հիմնականում դիտարկվել են որպես կերային մշակաբույսեր, մինչդեռ այժմ գնալով ավելի գնահատվում են՝ որպես հողի մակերեսը ծածկված պահելու միջոց:

Իրականում դրանց նշանակությունն այդ երկու կարևոր գործոնով չի սահմանափակվում: Միջանկյալ մշակաբույսերը նաև.

• հումուսի և սննդանյութերի լրացուցիչ աղբյուր են՝ ընդլայնելով սիդերատ հասկացողությունը և միավորելով այդ բոլոր ֆունկցիաները,

• նվազեցնում են քամու և ջրի էրոզիան՝ խոչընդոտելով սննդատարրերի հեռացումը հողի մակերեսից, դրանով իսկ պահպանում են նրա կառուցվածքը, որի շնորհիվ մշակաբույսերի համար հասանելի են դառնում հողի ներքին շերտերը,

• ճնշվում է մոլախոտերի աճը,

• նվազում է ջրի արտահոսքը,

• բարելավվում է հողի կենսաբանական ակտիվությունը, դրա հետ մեկտեղ, ֆիտոսանիտարական վիճակը, ազոտի կուտակման համար ստեղծվում են բարենպաստ պայմաններ՝ հիմնական մշակաբույսերի կողմից հետագայում դրանց յուրացման համար,

• նվազում է պեստիցիդների մնացորդային կուտակումը:

Որպես միջանկյալ մշակաբույս՝ սովորաբար խոզանացան եղանակով ցանվում են գարնանացան մշակաբույսեր՝ յուղատու հլածուկ, խրձախաղիկ (ֆացելիա), մանանեխ: Ցանկալի է, որ դրանց բերքատվությունը կազմի 20-40 g/հա՝ չոր նյութի հաշվով, ինչն ապահովվում է, օրնակ՝ մանանեխի համար 18-20 կգ/հա՝ ցանքի նորմայով: Պետք է հաշվի առնել, որ կարտոֆիլը, որպես հաջորդ մշակաբույս օգտագործելու դեպքում, ավելի լավ է մանանեխը փոխարինել հլածուկով, որն առաջինի նման նպաստավոր չէ պալարների նեկրոզ առաջացնելու տեսակետից: Հլածուկը գերադասելի է որպես նախորդ՝ նաև շաքարի ճակնդեղի համար, քանի որ հողում էապես նվազեցնում է նեմատոդների քանակը: Ցանքի նորման 20-25 կգ/հա է:

Խրձաձաղիկի համար լավագույն ցանքի նորման 10-15 կգ/հա է, և բացի նրանից, որ մոլախոտը ճնշող խիտ ցանքեր է առաջացնում, նաև պատկանում է մշակաբույսերի հազվադեպ ընտանիքի, ուստի կարող է ընդգրկվել ցանքաշրջանառության մեջ:

Միջանկյալ մշակաբույսերը հատկապես արժեքավոր են բոլոր այն դեպքերում, երբ ծղոտով մուլչապատումն ինչ-ինչ պատճառներով հնարավոր չէ իրականացնել: Իսկ այս եղանակը մեզ միշտ հնարավորություն է տալիս, որ հողերի պաշտպանության և էկոլոգիայի խնդիրներից տրամաբանական կերպով անցնենք կայուն երկրագործության:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԿԱՐԵՎՈՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ

Այն վերաբերվում է օվկիանոսի շրջակա միջավայրի և նրա ռեսուրսների պահպանմանը, միավորում է պետություններ, միջազգային կազմակերպություններ, գիտական հիմնարկություններ, հասարակական կազմակերպություններ, որոնք կազմում են Օվկիանոսի հարցերով գլոբալ ընկերակցություն (ՕՀԳԸ), և որը, նույնանուն ծրագրի շրջանակներում, պետք է կարգավորի օվկիանոսում ձկների գերորսը, աղտոտումը, միջավայրի պահպանումը:

Դեռ նախորդ տարվա սեպտեմբերին ընտրված աշխատանքային խմբերը որոշեցին 4 հիմնական ուղղություն, որոնցով ընդունվելու են օվկիանոսային և ափամերձ գոտիների վերաբերյալ կառավարման որոշումներ, համագործակցելու են պետական և մասնավոր սեկտորը, և այն հանգուցային բնագավառները, որտեղ պետք է կատարվեին հիմնական ներդրումները. դրանք էին՝

• վերականգնել ձկան հյուծված համաշխարհային ռեսուրսն առնվազն կիսով չափ,

• ավելացնել ձկնային տնտեսությունների մաքուր եկամուտը, որոնք ներկայումս ամեն տարի կորցնում են 5-ից մինչև 20-30 միլիարդ ԱՄՆ դոլար,

• ավելացնել Համաշխարհային օվկիանոսի պահպանվող տարածքներն այժմյան 2 %-ից մինչև 5%,

• կայուն ակվակուլտուրաներում ավելացնել ձկան պաշարները մինչև 2/3-ով:

Նախատեսվում է մոտ ժամանակներս ընկերակցության նախնական ֆոնդն ավելացնել առնվազն 300 միլիոն դոլարով, և այդ միջոցները ծախսել օվկիանոսային և ծովային վերահսկվող տարածքների կառավարման բարելավման վրա այնպես, որ դրանք նոր ներդրումների համար գրավիչ լինեն. ակնկալվում է, որ այդ ներդրումները կկազմեն 1,2 միլիարդ դոլար, ընդ որում, Գլոբալ էկոլոգիական հիմնադրամը, որ բնապահպանական ծրագրեր է ֆինանսավորում, արդեն նախատեսել է հատկացնել 600 միլիոն դոլար, որը հիմնականում կծախսվի ծովային և ափամերձ տարածքներում աղտոտման դեմ պայքարի ծավալման վրա:

Համաշխարհային բանկն (ՀԲ) արդեն 1,6 միլիարդ դոլարի ներդրում է կատարել ափամերձ գոտիների, ձկնային տնտեսությունների և ծովային վերահսկվող տարածքների կառավարման կատարելագործման նպատակով: Հետագա ներդրումները ՀԲ-ն ուղղելու է կապիտալի ճիշտ բաշխման, տեղեկացվածության բարձրացման և հարակից բնագավառների ներգրավման վրա: Դրանք են՝ ձկնորսությունը, ափամերձ գոտիների և վերահսկվող տարածքների կառավարումը, նավահանգիստները, քաղաքների և գյուղատնտեսության զարգացումը:

ՀԲ նախագահ Ռոբերտ Զոլլեկի կարծիքով՝ կապույտ էկոնոմիկայի ռեսուրսը թերագնահատված է: Մինչդեռ այստեղ կատարված ներդրումները բերում են աղքատության նվազեցմանը, աշխատատեղերի ավելացմանը, պարենային առաջարկի լավացմանը: ՀԲ-ի տվյալներով՝ մոտ 350 միլիոն աշխատատեղ պայմանավորված են օվկիանոսով՝ ձկնորսության, ակվակուլտուրայի, ափամերձ և ծովային տուրիզմի, գիտական հետազոտությունների առումով: Բացի այդ, զարգացող երկրներում ապրող 1 միլիարդ մարդու համար ձկնամթերքը սպիտակուցի հիմնական աղբյուրն է:

Մինչդեռ օվկիանոսային որսատեղերի 85%-ը գերօգտագործված են կամ սպառված: Վտանգի տակ են նաև ափամերձ տարածքների այնպիսի էկոհամակարգեր, ինչպիսին մանգրային անտառներն են, ջրաճահճային տարածքներն ու խութերը, որոնք պաշտպանում են մերձափնյա համայնքները փոթորիկներից, սննդի և եկամտի աղբյուր են հանդիսանում հատկապես զբոսաշրջության առումով:

Եվ վերջապես, օվկիանոսը մնում է կլիմայի փոփոխության խնդրում՝ որպես գլխավոր գործող պարագա, քանի որ կազմում է երկրագնդի մակերեսի ավելի քան 70 %-ը:

Վ Հ

Համայնքային

ՍԱՀՄԱՆՈՒՄ ԱՎԵԼԱՆՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԸ

«Էկո Գարդեն արտադրական կորպորացիա» ՄՊԸ-ն գտնվում է ՀՀ Տավուշի Մարզի Այգեձոր գյուղում: Տավուշի ԳԱՄԿ-ը հուսալի գործընկեր է ընկերության համար: Բերդի տարածաշրջանի խորհրդատու Վանիկ Ոսկանյանն այցելության օրերին մատուցվող ծառայություններով օգնում է ընկերությանը: Էկոգարդենը հիմնադրվել է 2007թ., աշխատանքային գործունեությունը սկսել 2011թ.:

Զբաղվում է մրգային և բանջարեղենային պահածոների արտադրությամբ: Ընկերությունն ունի 47 աշխատող: Գործարանի հումքի բազա են հանդիսանում տարածաշրջանի, հանրապետությունում աճեցվող մրգերը, հատապտուղները, բանջարաբոստանային մշակաբույսերը: Հումքի մթերումը կատարվում է պայմանագրային և ոչ պայմանագրային հիմունքներով, վճարումը՝ կանխիկ և ոչ կանխիկ: Թողարկվող արտադրատեսակներն են՝ կոմպոտներ, հյութեր, ըմպելիքներ, մուրաբաներ, ջեմեր, թթի դոշաբ, բանջարեղենային մարինադներ և պահածոներ: Արտադրանքի 95 տոկոսն իրացվում է Ռուսաստանի Դաշնությունում, մնացած 5 տոկոսը՝ հանրապետությունում: Տնտեսությունը նախատեսել է առաջիկայում տարածաշրջանում հիմնել խաղողի երիտասարդ այգիներ և զարգացնել խաղողագործությունը:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

Հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները Բերդի տարածաշրջանում գնալով ավելանում են: Դրան նպաստում են սահմանամերձ համայնքներին կառավարության լուրջ ուշադրության առկայությունն ու կոոպերատիվների ստեղծումը:

Տավուշի ԳԱՄԿ-ը, հերթական հանդիպման ընթացքում, համոզվեց դրանում: «Արոտավայրերի բարելավման» ծրագրով Պառավաքարում ստեղծված կոոպերատիվը՝ Սարգիս Մարգարյանի ղեկավարությամբ, բավականին մատչելի ծառայություններ է մատուցում տարածաշրջանի ֆերմերային տնտեսություններին:

Օրը կեսօր էր, երբ հանդիպեցինք կոոպերատիվի անդամ Ռաֆայել Հարությունյանին՝ իրեն վստահված տրակտորով վարի աշխատանքներ կատարելիս: Նա տեղեկացրեց, որ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն իրենց խոստացած հացահատիկահավաք կոմբայնն ու տրակտորը ժամանակին է տրամադրել՝ բավականին թեթևացնելով սահմանում ապրող գյուղացու հոգսը: Վարի աշխատանքները կատարվում են 30 հազ. դրամի շրջանակներում, արդյունքում ավելանում են հացահատիկի ցանքատարածությունները:

Տաթևիկ Նազինյան
Տավուշի ԳԱՄԿ

ԱԳՐՈ Լրատու
Հոկտեմբեր 5 - 15, 2015 թ.
Թիվ 26 (2081)

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԱՌՈՂՋ ՄԱՏՂԱՇԻ ԱՃԵՑՈՒՄ՝ ԾՆՎԵԼՈՒՑ ՄԻՆՉԵՎ ՄՈՐԻՑ ԱՆՁԱՏՈՒՄ ՆՈՐԱԾԻՆՆԵՐԻ ՓՈՐԼՈՒԾ - ԴԻԱՐԵԱ

Կյանքի առաջին օրերին մատղաշի մահացության պատճառներից ամենատարածվածը փորլուծն է: Փորլուծից մահացության բարձր տոկոս է նկատվում հիմնականում մինչև 2 շաբաթական մատղաշի մոտ: Առավել մեծ հասակում անկումների հավանականությունը կրկնակի նվազում է, սակայն մնում է բավականին բարձր՝ այլ հիվանդությունների հետ համեմատած:

Փորլուծի տեսակները: Փորլուծների տարբերակման համար հիմնականում հիմք ենք ընդունում առաջացման պատճառը՝ *սննդային* (կաթի գերկերակրում, վատորակ կաթի փոխարինիչներ, կաթնային կերակրման կտրուկ դադարեցում և այլն) և *վարակիչ* (տես աղյուսակ 1): Բնականաբար նման դասակարգումը խիստ պայմանական է, քանի որ ցանկացած սննդային պատճառ կարող է նախատրամադրել վարակիչ գործոնի ակտիվացման, մասնավորապես՝ մատղաշի մոտ E.coli-տարատեսակի մանրէներով պայմանավորված փորլուծների զարգացմանը:

Աղյուսակ 1

Բակտերիաներ	Վիրուսներ	Մակաբույծներ
Escherichia coli*	Rotavirus*	Criptosporidia*
Salmonella*	Coronavirus*	Coccidia
Clostridium perf.	Adenovirus	

*Փորլուծ առաջացնող վարակիչ գործոնների առավել հաճախ հանդիպող համակցություններ

Միտքանշաններ. Փորլուծը ջրալի կղանքային զանգվածի հաճախակի արտաթորումն է: Փորլուծի դեպքում հիվանդ հորթերի կղանքային զանգվածը 5-10 անգամ ավել ջուր է պարունակում, քան առողջ կենդանիների կղանքը: Այս ամենի հետ մեկտեղ՝ կղանքային զանգվածը լինում է գարշահոտ, դեղին կամ սպիտակ գունավորման, արյան հետքերով:

Հիվանդության զարգացմանը զուգահեռ՝ ավելանում են նոր կլինիկական նշաններ: Ստորև, ըստ հաջորդականության, նշվում են փորլուծի դեպքում զարգացող կլինիկական նշանները՝ թեթևից ծանր աստիճանի անցմամբ.

Հիվանդ հորթը. ցուցաբերում է ախորժակի աստիճանական թուլացում, արտաթորում է ջրալի կղանք: Ի հայտ են գալիս օրգանիզմի ջրազրկման նշաններ (փոս ընկած աչքեր, գզգզված, մազածածկ, մաշկի էլաստիկության նվազում և այլն), մարմնի ծայրամասերը սառում են (կճղակներ, ականջներ), դժվարանում է պառկած տեղից վեր կենալ, քայլելիս երերում է, պառկած տեղից ի վիճակի չէ վեր կենալ (պրոստրացիա):

Նպաստող գործոններ: Կյանքի առաջին օրերին փորլուծի առաջացմանը նպաստող հիմնական գործոններն են.

Հորթի ցածր իմունային պաշտպանությունը. քիչ քանակի խիժի օգտագործում, խիժով կերակրման ուշացում, վատ որակի խիժով կերակրում:

Արտաքին միջավայրում վարակիչ գործոնների ուժը. հորթերի խմբակային պահվածքը,

Սննդային գործոններ. կաթով կամ նրա փոխարինիչներով գերկերակրումը, կերերի կտրուկ փոփոխությունը,

Սթրես. Դդժվար ծին (շնչահեղձություն), տեղափոխություններ, աղմուկ, միջանցիկ քամիներ:

Հիվանդության հայտնաբերումը վաղ փուլում

Հիվանդության առաջացմանը նպաստող գործոնների իմացությունն օգնում է փորլուծը հայտնաբերել զարգացման վաղ փուլում, որը հնարավորություն է տալիս համապատասխան միջոցառումների անցկացմամբ, նվազեցնել անկումների հավանականությունը: Հիմնականում, կյանքի առաջին օրերին հորթերն օժտված են բարձր ախորժակով, հետևաբար կենդանիների առողջական վիճակի գնահատումը կարելի է կատարել անմիջապես կերակրման ժամանակ: Եթե հորթը չի ցուցաբերում քաղցի նշաններ և հրաժարվում է կաթից, սա արդեն իսկ ահազանգ է ախտաբանական պրոցեսի զարգացման մասին: Հետևողական և ուշադիր ֆերմերը կարող է փորլուծի առաջացման բնորոշ նշանից, նույնիսկ, 1-2 օր ավելի շուտ հայտնաբերել հիվանդ կենդանիներին:

Ազդանշանային ախտանիշները, որոնք առաջացող փորլուծի մասին են վկայում, հետևյալն են՝ քթաշրթունքային հայելու չորություն, քթանցքերում չորացած լորձի կեղեր, պինդ, ջրազրկված կղազանգված, ախորժակի բացակայություն, թուլություն, ռեկտալ ջերմաստիճանի բարձրացում (>39.3 ^{0}C): Եթե հորթի մոտ նշված ախտանիշներից որևէ մեկը նկատվում է, ապա հարկավոր է կերակրվող կաթի քանակը կիսով չափ պակասեցնել՝ ժամանակավորապես թեթևացնելով մարսողական համակարգի աշխատանքը: Նման պայմաններում, նույնիսկ փորլուծի առաջացման դեպքում, բուժման և կենդանիների ապաքինման արդյունավետությունը մի քանի անգամ ավելի բարձր է լինում:

ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ. կանխարգելման հիմնական ուղղվածությունը պետք է լինի՝ մատղաշին ապահովել համապատասխան, բավարար մակարդակի պասսիվ իմունիտետ (մորից խիժով փոխանցված) և բացառել նպաստավոր գործոնների ազդեցությունը:

ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐ. որպես կանոն՝ հորթի իմունային համակարգը, մինչև 6-8 շաբաթական հասակը, դեռևս լիարժեք ձևավորված չէ: Այդ իսկ պատճառով պատվաստումների նկատմամբ մատղաշի իմունային արձագանքը չի կարող պատվաստանյութի նկատմամբ լիարժեք լինել: Կաթնատու կենդանիների (մայրերի) պատվաստումը փորլուծ առաջացնող հարուցիչների նկատմամբ (մասնավորապես՝ E.coli, Salmonella, Rotavirus) լայն տարածում չունի՝ ցածր արդյունավետության պատճառով, քանի որ գոյություն ունեն այդ հարուցիչների զանազան տարատեսակներ և խաչաձև դիմադրողականությունը, այն էլ խիժով փոխանցված, գրեթե չի գործում:

Տնտեսության կառավարման ճիշտ կազմակերպումը կարող է բացառել նախատրամադրող գործոնները և դրանով իսկ նվազագույնի հասցնել փորլուծի դեպքերը

ՄԱՐՍՈՂՈՒԹՅՈՒՆ

1) Կերակրել անհրաժեշտ քանակության և լավ որակի խիժով:
2) Կաթը և խիժը կերակրելուց առաջ պետք է տաքացվեն մինչև մարմնի ջերմաստիճան՝ 38-39 ^{0}C, որը նպաստում է կաթնային մակարդուկի ձևավորմանն ու լիարժեք մարսմանը:
3) Կերակրումը պետք է կազմակերպել օրական 2 անգամ և օգտագործված տարաները, շշերը և ծծակները յուրաքանչյուր անգամ պետք է ենթարկել սանիտարական մշակման և չորացման:
4) Օգտագործել միայն լավորակ կաթի փոխարինիչներ և նախապատվությունը տալ բարձր յուղայնությամբ (15-20 %) փոխարինիչներին, որոնց մարսելիությունն 10-15 % յուղայնության փոխարինիչների համեմատությամբ, ավելի բարձր է:
5) Խուսափել գերկերակրումից:

ՊԱՀՎԱԾՔ և ԽՆԱՄՔ

6) Հորթերը պետք է գտնվեն անհատական վանդակ-տնակներում, պաշտպանված լինեն միջանցիկ քամիներից, բայց ապահովված լինեն բավարար օդափոխությամբ:
7) Հորթանոցները պարբերաբար ենթարկել ախտահանության: Ազատված վանդակ-տնակների ախտահանությունից հետո, 3 շաբաթից շուտ նոր հորթեր չբնակեցնել: Ուղորդվել «ԲՈԼՈՐԸ ԲՆԱԿԵՑՎՈՒՄ ԵՆ/ԲՈԼՈՐԸ ԱՐՏԱՀԱՆՎՈՒՄ ԵՆ» սկզբունքով:
8) Խուսափել փորլուծով հիվանդ կենդանիներին համատեղ նույն շենքում (թեկուզ և մեկուսացված առանձնավանդակներում) առողջ հորթերի հետ պահելուց:
9) Խուսափել այլ տնտեսություններից 3 շաբաթականից երիտասարդ մատղաշի ձեռքբերումից:

Վ. Մկրտչյան
ՀԱԱՀ, անասնաբուժական գիտությունների թեկնածու

ԴԱՍԸՆԹԱՑ

«ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան և ՀԵԿԱ գործընկեր ՎԻՍՏԱԱ փորձագիտական կենտրոնը սեպտեմբերի 23-ից հոկտեմբերի 1-ը կազմակերպել էին յոթօրյա դասընթաց՝ «Բնապահպանական վերահսկողություն, վնասատուների դեմ ինտեգրացված պայքար ջերմոցային տնտեսություններում» թեմայով: Մասնակցում էին ՀՀ Լոռու մարզի Ախթալա, Շամլուղ, Մեծ Այրում և Նեղոց համայնքների շուրջ 22 կին ձեռներեցներ, ովքեր հանդիսանում են ՀՀ Կին ձեռներեցների ցանցի անդամ, ՀԵԿԱ շահառուներ ու գործընկերներ:

Դասընթացի ընթացքում կին ձեռներեցները ծանոթացել են բնապահպանական վերահսկողության բոլոր կանոններին և նորմերին, թունաքիմիկատների կիրառման անվտանգությանը, վնասատուների դեմ պայքարի կառավարման մեթոդներին, բերքի ճիշտ մշակման բոլոր մանրուքներին:

Դասընթացի մասնակիցները հնարավորություն ունեին նաև պրակտիկ աշխատանքերի միջոցով կիրառել բոլոր այն մեթոդներն ու միջոցները, որոնք ներկայացվել էին դասընթացի օրերին: Պրակտիկ դասընթացների շնորհիվ, կին ձեռներեցները սովորեցին, թե ինչպիսի պայմաններում պետք է կառուցել ջերմոցային տնտեսությունը, ինչպես հողը հարստացնել սննդարար նյութերով: Սա հնարավորություն տվեց հենց տեղում առաջ եկած հարցերին տալ սպառիչ ու ճշգրիտ պատասխան: Դասընթացները Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի կողմից իրականացվող «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագրի մասն են կազմում:

2013թ. մայիսից «Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» (ՀԵԿԱ) հասարակական կազմակերպության կողմից Լոռու մարզում իրականացվում է «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագիրը: Ծրագրի գործընկերներն են՝ CISP կազմակերպությունը, Լոռու մարզպետարանը և Վանաձորի քաղաքապետարանը: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 768.357.95 €, որի 80 %-ը ֆինանսավորում է Եվրամիությունը, իսկ 20%-ը՝ ՀԵԿԱ-ն: Ծրագրի տևողությունը 2013թ. մայիսից մինչև 2016թ. ապրիլն է:

«Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագրի նպատակն է՝ խթանել Լոռու մարզի կանանց սոցիալ-տնտեսական կարողությունների զարգացումը՝ այսպիսով նպաստելով կանանց սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավմանը:

ՀԵԿԱ

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

ՕԳՏԱԿԱՐ ԴԵՂԱԲՈՒՅՍԵՐ, ՈՐՈՆՔ ԱՅՆՔԱՆ ԷԼ ՀԱՅՏՆԻ ՉԵՆ

Մեզանից շատերը գիտեն, որ սխտորը, սպանախը, կոճապղպեղը կարող են օգտագործվել նաև բուժական նպատակներով: Սակայն կան շատ այլ օգտակար բույսեր, որոնց բուժիչ հատկությունների մասին հազվադեպ է հիշատակվում, թեև իրականում դրանք երբեմն ավելի են զարմացնում, քան մեզ հայտնի դեղաբույսերը:

1. Խատուտիկ

Խատուտիկներն ուտելի ծաղկաբույսեր են, որոնք լայնորեն տարածված են Հարավային Ամերիկայում: Դրանք օգտագործում են բժշկական դեղամիջոցներում և ըմպելիքներում: Խատուտիկի ծաղիկները, տերևներն ու արմատներն օգտագործում են որպես սննդամթերք՝ բուժիչ նպատակներով, պատրաստում են մաքրող հեղուկ՝ արյունատար անոթների համար, որը լավացնում է լյարդի աշխատանքը: Խատուտիկը հավասարակշռում է շաքարի քանակն արյան մեջ և կարգավորում խոլեստերինի մակարդակը: Բացի դրանից, այս բույսերը կանխում են լեղաքարերի առաջացումը և բարելավում ենթաստամոքսային գեղձի աշխատանքը:

2. Կալիֆորնիայի կակաչ

Այս բույսը վառ գույնի է: Կալիֆորնիայի կակաչն արդյունավետ հանգստացնող միջոց է, անվտանգ է նույնիսկ երեխաների համար: Կարելի է օգտագործել որպես թեյ՝ սթրեսի և լարվածության թուլացման նպատակով: Ավելի թունդ թուրմը հանդես է գալիս որպես ցավազրկող: Այն պատրաստվում է բույսի բոլոր անվտանգ մասերի եփուկից՝ ներառյալ ցողունն ու արմատները՝ թրմելով ամբողջ գիշերը:

3. Նարգիզ

Նարգիզը ծաղկաբույս է, որն աճում է երկրագնդի բազմաթիվ մասերում: Այն օգտագործվում է ամառային մի շարք ուտեստներին երանգ տալու համար: Այս բույսը կարող է օգնել մաշկի բազմաթիվ խնդիրների դեպքում և արդյունավետորեն պայքարում է պիգմենտացիայի դեմ: Նարգիզը լավագույն միջոցներից մեկն է՝ որպես ջերմ իջեցնող: Այն բավական արդյունավետ է գլխացավի և ատամի ցավի դեպքում: Նարգիզն ունի հակաբորբոքային և հակաալերգիկ ազդեցություն, կանխում է ուռուցքների ձևավորումը:

4. Մեղվամուշկ

Այս օգտակար բույսին կարելի է հանդիպել հիմնականում Եվրոպայում: Մեղվամուշկն օգտագործվում է բուրավետ գարեջրի արտադրությունում, ավելացվում է զանազան մսային և ձկնային ուտեստներին, տերևներով մաշկը շփելն արդյունավետ միջոց է միջատների խայթոցներից պաշտպանվելու համար, բույսն օգնում է նաև ազատվել ճիճուներից: Ասում են, որ մեղվամուշկը փոքր-ինչ թունավոր է, բայց մի քանի տերև ուտելն օգտակար է:

5. Ձարխոտ իգական

Երկարավուն, բաց կանաչ գույնի բույս է ձարխոտը հնագույն բույսերից մեկն է երկրի վրա: Այս բույսը բուժում է շատ հիվանդություններ: Այն խորհուրդ է տրվում ջերմության և հազի դեպքում, բացի այդ ձարխոտը կանխում է աղիքային մակաբույծների առաջացումը, ինչպես նաև պաշտպանում է ասթմայից, թոքաբորբից և բրոնխիտից: Այն բավական արդյունավետ է արևայրուքների դեպքում:

6.Առվույտ



Առվույտը հաճախ օգտագործում են որպես անասնակեր, քանի որ այն չափազանց հարուստ է հանքային և սննդարար նյութերով, ինչպես նաև պարունակում է մեծ քանակությամբ պրոտեին: Այն օգտագործվում է որպես հզոր միզամուղ, ինչպես նաև հիվանդությունից հետո ուժերի վերականգնման համար: Այս բույսը մաքրում է լյարդը և աղիները, օգնում է նվազեցնել նաև խոլեստերինի մակարդակը: Բուժման նպատակով կարելի է օգտագործել սերմերը կամ ծիլերը, բայց ամբողջական տերևները ևս կարելի է օգտագործել սննդի մեջ:

7. Թեյի ծառ

Առավել արդյունավետ բույսերից մեկն է վնասակար մանրէների դեմ, ինչպիսին՝ ստաֆիլոկոկն է, պաշտպանում է միջատներից և գրեթե ակնթարթորեն բուժում է նրանց խայթոցները: Թեյի ծառի յուղը լավագույն հակասնկային միջոցներից մեկն է: Արագ բուժում է կտրվածքներն ու այրվածքները: Թեյի ծառի յուղն արդյունավետ է գլխացավերի և մրսածության դեմ:

8. Ուրց

Ուրցը լայնորեն օգտագործվում է որպես անուշաբույր համեմունք: Այն հիանալի միջոց է թոքերի խնդիրների դեպքում, պահպանում է արյան ճնշման մակարդակը: Այս հրաշալի բույսը նվազեցնում է հաստ աղու քաղցկեղի հավանականությունը:

9. Եղեսպակ

Եղեսպակն աներևակայելի օգտակար խոտաբույս է: Այն օժտված է հանգստացնող և հակասնկային հատկություններով: Եղեսպակի ճիշտ պատրաստված եփուկն օգնում է ջղաձգության, հազի դեպքում, պայքարում է մրսածության դեմ, սպանում է մանրէները:

10. Քաղցր մանուշակ

Քաղցր մանուշակն ի սկզբանե աճել է Եվրոպայում և Ասիայում, սակայն այսօր այն աճեցնում են ամբողջ աշխարհում: Այս բույսի օշարակն արդյունավետ է մրսածության, գրիպի, հազի և անգինայի դեպքում: Որպես թեյ՝ այն օգնում է գլխացավի ու մկանային ցավի ժամանակ:

11. Լեռնային ծոթրին

Լեռնային ծոթրինը ձեր փրկիչն է միջատների այրող խայթոցներից: Այն գերազանց հականեխիչ միջոց է, և բացի այդ, օգտագործվում է որպես անուշաբույր համեմունք մսի համար:

Ռոմանեսկո՝ բրոկկոլիի և ծաղկակաղամբի հիբրիդ

Ռոմանեսկոն կաղամբի տեսակ է (լատ.՝ Brassica oleracea), պատկանում է նույն տեսակային խմբին՝ Botrytis-ին, որին պատկանում է ծաղկակաղամբը: Ծաղկակաղամբի այս տեսակի անունն արդեն մատնանշում է ծագման մասին: Այն մշակվել է հիմնականում Հռոմում, որտեղ հայտնաբերվել և կատարելագործվել է դանիացի այգեգործների կողմից: Ռոմանեսկո իտալերենից թարգմանած նշանակում է հռոմեական:

Ըստ որոշ պնդումների՝ ռոմանեսկո բրոկկոլին հայտնի է եղել դեռևս 16-րդ դարում, սակայն միջազգային շուկայում այն հայտնվել է 19-րդ դարի 90-ական թթ.: Հետաքրքիր տեսք ունեցող այս բանջարեղենը ծաղկակաղամբի և բրոկկոլիի հիբրիդ է: Ռոմանեսկոն շատ նման է ծաղկակաղամբի, սակայն ունի բաց կանաչ գույն: Եվ ծաղկակաղամբը, իր տպավորիչ բազմազանությամբ, և ռոմանեսկոն բնական օբյեկտներ են, որոք բացատրություն են տալիս ֆրակտալների հայեցակարգին: Նրանք 70-ական թվականներին ներկայացվել են մաթեմատիկայի ասպարեզում՝ Յեյլի համալսարանի ֆրանսիացի գիտնական Բենուա Մանդելբորտի կողմից: Ֆրակտալը բնութագրող որոշիչն իր ինքնանմանությունն է՝ փոքր հատվածի մասնիկը կազմում է ամբողջական պատկերի մի մասը: Այսպիսով՝ յուրաքանչյուր ռոզետ պատկերում է ծաղկակաղաբն ամբողջությամբ:

Յուրաքանչյուր կոկոն բաղկացած է մի քանի փոքրիկ կոկոններից, որոնք գնալով ավելի փոքրանում են, բայց փոքրացող կոկոններն իրենց տեսքով լրիվ նման են իրենից ավելի մեծ կոկոնին: Բանջարեղենը հարուստ է C և K վիտամիններով:

Այսօր այս բանջարեղենը բազմազանություն է մտցնում տաք ուտեստների մեջ, ինչպիսիք են՝ ֆրիկասեն կամ տաք սենդվիչները, իսկ թարմ բանջարեղենային աղցանների մեջ օգտագործելիս, յուրահատուկ համ ու տեսք է տալիս:

Չնայած Իտալիայում գոյություն ունեն հատուկ բաղադրատոմսեր ռոմանեսկոյի պատրաստման համար, աշխարհի այլ երկրներում այն պատրաստում են այնպես, ինչպես սովորական բրոկկոլին: Կարևոր է հետևել պատրաստման ժամանակահատվածին: Համեմատած ծաղկակաղամբի և բրոկկոլիի՝ ռոմանեսկոն ավելի նուրբ հյուսվածքներ ունի և ավելի փափուկ ու համեղ է: Բույսը միամյա է, հասունանում է վաղ աշնանը: Ամբողջ բույսի համեմատ, պտուղը բավականին փոքր է: Ռոմանեսկոն սառնարանում երկար ժամանակ պահելուց հետո կորցնում է իր սննդարար հատկությունները և սկսում է փչանալ: Սակայն սառեցման ժամանակ այն ամբողջ տարվա ընթացքում պահպանում է իր օգտակար հատկությունները:

Մանրածախ վաճառքում ռոմանեսկո կարելի է հանդիպել և թարմ և պահածոյացված վիճակում: Այն պարունակում է շատ քիչ կալորիականություն՝ 100 գրամը 25 կկալ: Կաղամբի այս տեսակի օգտագործումը չի հանգեցնում գիրության: Շնորհիվ իր վիտամինային բաղադրության՝ կատարյալ արտադրանք է գեղեցկության համար: Այն նպաստում է օրգանիզմի մաքրմանը, մաշկը դարձնում է ավելի հարթ, իսկ մազերը՝ խիտ և ուժեղ: Հանքանյութերից հարուստ է երկաթով, ֆոսֆորով, կալցիումով, կալիումով: Պարունակում է նաև սելեն և ֆտոր: Սելենը պաշտպանում է քաղցկեղից և այլ հիվանդություններից: Բացի այդ, ռոմանեսկոն բազմազանություն ու նորություն է մտցնում բանջարեղենային շուկա՝ շնորհիվ իր գեղեցիկ և տարբերվող տեսքի:

Թարգմանությունը՝ Լիլիթ Գասպարյանի

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
ԱԳՐՈ Լրատու
թերթի
1 տարվա գինը՝ 3960 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ
1 համարինը՝ 120 դրամ
2015 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
«ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
ամսագրի
1 տարվա գինը՝ 8100 դրամ
6 ամսվանը՝ 4050 դրամ
1 համարինը՝ 1350 դրամ
Բաժանորդագրությունը իրականացնում են՝
Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները,
«Հայփոստ», «Հայմամուլ», «Պրես-Ատրաշ» կազմակերպությունները

ԱԳՐՈ Լրատու
AGRONEWS
Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության
հանրապետական կենտրոն» ՓԲԸ
Տնօրեն Ա. ՎԱՀԱՆՅԱՆ
Գլխավոր խմբագիր և
համարի պատասխանատու՝ Լ. ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆ

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 121
ստորագրված է տպագրության 14.10.2015 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,
Երևան, Մամիկոնյանց 39ա